ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1 **հեռ. +(374 11) 514-240**

№ Հ/1643
04-08-2025

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հետք» թերթի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի՛ Տիրայր Մուրադյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

«Հետք»-ի հարցման մեջ ընտրողաբար անդրադարձ է կատարվել միայն Irrigate ընկերությանը՝ անտեսելով քաղաքապետ Տիգրան Ավինյանի կենսագրությունում առկա աշխատանքային փորձը՝ մոռացության մատնելով Տիգրան Ավինյանի գործունեությունը մինչև պետական ծառայության անցնելը։

Տիգրան Ավինյանը դեռևս 2017 թվականին լինելով 28 տարեկան և չզբաղեցնելով պետական որևէ պաշտոն՝ հայտարարագրել է շուրջ 30 միլիոն ՀՀ դրամ եկամուտ (դոլարի փոխարժեքը 2016-2017 միջինացված) ։ Կից՝ հայտարարագիրը։

Տիգրան Ավինյանի՝ 2014 թվականին Միացյալ Թագավորությունում ուսանելու ծախսերը, այդ թվում՝ ուսման վարձը և կեցությունը, ինչպես նաև կնոջ Լոնդոնում ուսանելու ժամանակ նրա կեցության հետ կապված ծախսերն ամբողջությամբ հոգացել է Տիգրան Ավինյանի ընտանիքը։ Նույնը վերաբերում է եղբոր՝ Իսպանիայում ուսանելու ընթացքում վարձավճարների և ապրուստի ծախսերին։

2017 թվականին քաղաքապետը և իր հայրը մոտ 80.000 ԱՄՆ դոլարի ներդրում են կատարել կրիպտոարժույթների մեջ։ Հետագայում, ընտանիքին պատկանող ընկերություններից մեկը հիմնել է 1.5 ՄգՎտ արևային կայանների արտադրություն. ամբողջ էլեկտրաէներգիան ծախսվում է կրիպտո արտադրության համար։ Այլ ձեռնարկություններ նույնպես առկա են, սակայն, քաղաքապետի ընտանիքի հետ առնչություն ունեցող որևէ մի ընկերություն չի մասնակցել և չի մասնակցում պետական և համայնքային գնումներին, ինչպես նաև պահպանում է շահերի բախման հնարավոր ամենախիստ քաղաքականությունը։

Ինչ վերաբերում է Շողակաթի տանը՝ ո՛չ, այն չի կառուցվում քաղաքապետի համար, քանի որ քաղաքապետը նախընտրում է ամառային հանգիստն անցկացնել Սևանում՝ Նկարիչների միությանը պատկանող հանգստյան տանը։

Ամփոփելով արձանագրենք հետևյալը.

փորձ է արվում ստեղծել մի պատրանք, ըստ որի՝ Տիգրան Ավինյանն իբր մինչ պետական պաշտոններ զբաղեցնելը չի ունեցել միջոցներ։ Այս միտքը համակարգային դարձած մանիպուլյացիա է։ Փաստերը սակայն դա հերքում են։

Քաղաքապետը մաղթում է ձեզ հետևողական և պրոֆեսիոնալ աշխատանք։
Խնդրում ենք պատասխանը հրապարակել ամբողջությամբ՝ առանց խմբագրման, մասնատման կամ մոլորեցնող վերնագրերի։